600.0008.20.01.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2021 թվականի №8Ա
քաղ. Երևան

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի հոկտեմբերի 8-ի «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №403Ա որոշմամբ «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է 2125-2140ՄՀg, 1935-1950ՄՀg հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման №0184 թույլտվությունը (այսուհետ՝ Թույլտվություն),

բ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2020 թվականի սեպտեմբերի 23-ի №04/11.1/5213-2020 գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է Ընկերությանը պատկանող CI 40882 (Cell ID-բազային կայանի բջջի ինդենտիֆիկացիոն կոդ) միևնույն կոդով 2117.6ՄՀg, 2122.6ՄՀg, 2127.6ՄՀg ռադիոհաճախակա-նություններով ազդանշանների առկայության մասին, որոնցից միայն 2127.6ՄՀg ռադիոհաճախականությունն է հատկացված Ընկերությանը,

գ) Հանձնաժողովը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ՝ Թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի սեպտեմբերի 29-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4135-2020 գրությամբ,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №MH/L200707/1.0/RY գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ օգտագործում է միայն իրեն տրամադրված ռադիոհաճախականությունների տիրույթը և նշված հարցը պարզաբանելու համար առաջարկել է կազմակերպել համատեղ չափումներ,

ե) ի պատասխան Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4198-2020 գրության, Նախարարությունը 2020 թվականի հոկտեմբերի 23-ի №04/11.1/5970-2020 գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերության մասնագետների հետ համատեղ նախատեսվում է իրականցնել չափումներ, որի կապակցությամբ Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 28-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4430-2020 գրությամբ, Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասի համաձայն՝ հոկտեմբերի 29-ից 30-օրյա ժամկետով երկարաձգվել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը,

զ) Նախարարությունը 2020 թվականի նոյեմբերի 10 №04/11.1/6247-2020 և նոյեմբերի 12-ի №04/11.1/6298-2020 գրություններով հայտնել է, որ 2020 թվականի հոկտեմբերի 26-ին Ընկերության հետ Գորիս քաղաքում իրականացված համատեղ չափումների արդյունքում Ընկերության միևնույն բջջի նույնականացման կոդով արձանագրվել են 2127.6ՄՀց, 2122.6ՄՀց և 2117.6ՄՀց հաճախականություններով ազդանշաններ, իսկ բազային կայանը անջատելուց հետո արտաշերտային ճառագայթումները վերացել են: Բացի այդ, Սիսիան քաղաքում իրականացված բջջային ռադիոհեռախոսային կապի ծածկույթների տեստավորման արդյունքում Ընկերությանը պատկանող CI 40263 և 40272 (Cell ID-բազային կայանի բջջի ինդենտիֆիկացիոն կոդ) միևնույն նույնականացման կոդերով ազդանշաններ են արձանագրվել հատկացված 2127.6ՄՀց հաճախականությունից զատ նաև 2122.6ՄՀց կողմնակի հաճախականությամբ,

է) ի պատասխան Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 10-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4594-2020 գրության՝ Ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 13-ի №MH/L200819/1.0/RY և նոյեմբերի 16-ի №MH/L200821/1.0/RY գրություններով հայտնել է, որ Սյունիքի մարզի Գորիս և Սիսիան քաղաքներում առկա ճառագայթման աղբյուրները Ընկերությանը պատկանող բջջային կայանների անսարք հաղորդակներն են, որոնց փոխարինման միջոցով հայտնաբերված ճառագայթման աղբյուրները տեղայնացվել և չեզոքացվել են, վերոնշյալ անսարքությունը հնարավոր չէր արձանագրել բջջային կայանները սպասարկող համակարգի միջոցով: Այն կարող էր հայտնաբերվել միայն անմիջական տեղային չափումների եղանակով համապատասխան սարքավորումների օգտա-

գործմամբ, և որ արտաշերտային ռադիոալիքները հնարավոր չէ օգտագործել ռադիոկապ հաստատելու համար, որը նաև արձանագրվել է համատեղ չափումների ժամանակ,

ը) Հանձնաժողովը 2020 թվականի նոյեմբերի 17-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4650-2020 գրությամբ, Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, վարչական վարույթի համար էական համարվող հանգամանքները պարզելու նպատակով, Նախարարությանը խնդրել է փոխօգնության կարգով տրամադրել Ընկերության կողմից 2122.6ՄՀց և 2117.6ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն, որին ի պատասխան՝ Նախարարությունը 2020 թվականի նոյեմբերի 27-ի №04/11.1/6531-2020 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի նոյեմբերի 30-ին Սյունիքի մարզ կատարվելիք այցի ընթացքում արտաշերտային ճառագայթումների չեզոքացման մասին տեղեկատվությունը կուսումնասիրվի և արդյունքների մասին կտեղեկացվի,

թ) Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 27-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4785-2020 գրությամբ, Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի և 2-րդ մասի համաձայն, նոյեմբերի 27-ից 30-օրյա ժամկետով երկարաձգել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը,

ժ) Նախարարությունը 2020 թվականի դեկտեմբերի 14-ի №04/11.1/6976-2020 գրությամբ տեղեկացրել է, որ նախատեսվում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 18-ը իրականացնել կրկնակի համատեղ հետազոտումներ,

ժա) Հանձնաժողովը 2020 թվականի դեկտեմբերի 28-ի №ԳԲ/34.2-Ղ3-1/5129-2020 գրությամբ, Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, վարչական վարույթի համար էական համարվող հանգամանքները պարզելու նպատակով, Նախարարությանը դարձյալ խնդրել է փոխօգնության կարգով տրամադրել Ընկերության կողմից 2122.6ՄՀց և 2117.6ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն,

ժբ) Հանձնաժողովը 2020 թվականի դեկտեմբերի 28-ի №ԳԲ/34.2-Մ2-6/5132-2020 գրությամբ, Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասի համաձայն, դեկտեմբերի 28-ից ևս 30-օրյա ժամկետով երկարաձգել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը,

ժգ) Նախարարությունը 2020 թվականի դեկտեմբերի 29-ի №04/11.1/7362-2020 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի դեկտեմբերի 17-ին Սյունիքի մարզի Գորիս և Սիսիան քաղաքներում իրականացրել են 2110-2125 ՄՀց հաճախականային տիրույթի հետազոտումներ, որոնց արդյունքում Սիսիան քաղաքում արտաշերտային

ճառագայթումներ չեն գրանցվել, իսկ Գորիսում քաղաքում 2122.6ՄՀց հաճախականությամբ գրանցվել են արտաշերտային ճառագայթումներ՝ բազային կայանի հաղորդակի անսարքության հետևանքով, որն անջատելուց հետո ճառագայթումները վերացել են: Միևնույն ժամանակ, Նախարարությանն ուղղված Ընկերության 2020 թվականի դեկտեմբերի 22-ի №MH/L200906/1.0/RY գրության համաձայն՝ Գորիս քաղաքում գտնվող բազային կայանի անսարք հաղորդիչը հանվել է շահագործումից, և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ այն փոխարինելու ուղղությամբ, որի կապակցությամբ Նախարարությունն առաջարկել է հիմք ընդունել Ընկերության վերոնշյալ գրությամբ ներկայացված տեղեկատվությունը,

ժդ) հարուցված վարչական վարույթի շրջանակում, Նախարարության դիրքորոշման հիման վրա, փաստվել է, որ Ընկերության ձեռնարկած միջոցների արդյունքում ռադիոհաճախականություններն օգտագործվում են թույլտվության պայմաններին համապատասխան, և

հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ ռադիոհաճախականությունների օգտագործման Թույլտվության պայմանների խախտման համար 2020 թվականի սեպտեմբերի 29-ին հարուցված վարչական վարույթը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱԴՐԱՄՅԱՆ

ք. Երևան
20 հունվարի 2021թ.